https://doi.org/10.46991/hc.2022.18.2.39

The Evaluation of the national Struggle of the Risorgimento famous figures in " The Mshak"

Felix Movsisyan
https://orcid.org/0000-0001-7576-9672
PhD, Professor, Head of the Chair of History of Vanadzor State University after H. Tumanyan
history-vph@mail.ru

Keywords: Risorgimento, Italy, freedom, independence, homeland, unification, Giuseppe Mazzini, Victor Emmanuel II, Giuseppe Garibaldi.

The Italian Risorgimento, which aimed to overthrow the Austrian rule and unite Italy, found a wide response in the Armenian public thought of the time and in the periodical press. Reflecting on this, "Mshak" newspaper, the pioneer of the Armenian liberal current, highlighted the role of Risorgimento leaders Giuseppe Mazzini, Giuseppe Garibaldi, King Victor Emmanuel II and Count Camillo Cavour in the unification of Italy.

The newspaper calls G. Mazzini "prominent republican", "democratic genius" and "great patriot", who had been fascinated by the idea of freedom and union of his homeland since his student years.

In particular "Mshak" newspaper highly appreciates G. Garibaldi's contribution to the struggle for the unification of Italy, calling him "a great Italian patriot" who immortalized his name with his services to the motherland. According to the description of the newspaper, G. Garibaldi constantly invited his compatriots to fight for freedom and showed them a personal example of "unshakable determination".

"Mshak" characterizes King Victor Emmanuel II as "an outstanding patriot and an outstanding statesman", a patriot and brave soldier, a king guided by the interests of the people and the state. According to the opinion of the newspaper, the king was a cautious person, he never took a decisive step, he allowed popular hero G. Garibaldi to start the struggle every time. In this way, he united Italy, which he considered the goal of his life. According to "Mshak", Victor Emmanuel's "name occupies a glorious place in the history of Italy".

"Mshak" also highlights C. Cavour in the Italian liberation struggle. According to the newspaper, King Victor Emmanuel was always guided by C. Cavour's advice and "he is beholden to him most of his successes".

History and Culture. Journal of Armenian Studies, Vol.-2(18), 2022, pp. 39-60

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Received: 12.10.2022
Revised: 03.12.2022
Accepted: 25.12.2022

© The Author(s) 2022

Ռիսորջիմենտոյի ականավոր գործիչների ազգային պայքարի գնահատականը «Մշակ» թերթում

Ֆելիքս Մովսիսյան
պ.գ.դ., պրոֆեսոր, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի Պատմության ամբիոնի վարիչ

Բանալի բառեր՝ Ռիսորջիմենտո, Իտալիա, ազատության, անկախություն, հայրենիք, միավորում, Ջուզեպպե Մացցինի, Վիտտորիո Էմմանուել II, Ջուզեպպե Գարիբալդի:

Իտալական Ռիսորջիմենտոն, որը նպատակ էր հետապնդում թոթափել ավստրիական տիրապետությանը և միավորել Իտալիան, լայն արձագանք գտավ ժամանակի հայ հասարակական մտքում և պարբերական մամուլում: Դրան անդրադարձած հայ լիբերալ հոսանքի առաջամարտիկ «Մշակ» թերթը Իտալիայի միավորման գործում կարևորել է Ռիսորջիմենտոյի առաջնորդներ Ջուզեպպե Մացցինիի, Ջուզեպպե Գարիբալդու, Վիտտորիո Էմմանուել II թագավորի և կոմս Կամիլո Կավուրի դերը: Թերթը Ջ. Մացցինիին անվանում է «երևելի հանրապետական», «ժողովրդապետական հանճար» և «մեծ հայրենասեր», ով դեռ ուսանողական տարիներից հրապուրվեց իր հայրենիքի ազատության ու միության գաղափարով:

«Մշակի» կարծիքով՝ Ջ. Մացցինիին թեպետ իր ստեղծագործություններով ու գործունեությամբ չկարողացավ միավորել Իտալիան, բայց «նշանավոր դեր խաղաց» հայրենասիրական ուժերի համախմբման ու ազգային պայքարի ղեկավարման գործում: «Մշակ» թերթն առանձնապես բարձր է գնահատում Ջ. Գարիբալդու ներդրումը Իտալիայի միավորման համար պայքարում՝ նրան անվանելով «իտալական մեծ ազգասեր», ով իր անունն անմահացրեց հայրենիքին մատուցած ծառայություններով: Լրագրի բնութագրմամբ՝ Ջ. Գարիբալդին իր հայրենակիցներին անդադար հրավիրում էր կռվել ազատության համար և նրանց ցույց էր տալիս «անսասան հաստատամտության» անձնական օրինակ:

«Մշակը» Վիտտորիո Էմմանուել II թագավորին բնութագրում է որպես «երևելի ազգասեր և երևելի պետական գործիչ», հայրենասեր և քաջ զինվորական, ժողովրդի ու պետության շահով առաջնորդվող թագավոր: Թերթի կարծիքով թագավորը զգույշ մարդ էր, երբեք վճռական քայլ չէր անում, թույլ էր տալիս, որ ամեն անգամ պայքարը սկսի ժողովրդական հերոս Ջ. Գարիբալդին:

«Մշակի» բնութագրմամբ՝ Վիտտորիո Էմմանուելի «անունը փառավոր տեղ է գրավում Իտալիայի պատմության մեջ»: «Մշակը» իտալական ազատագրական պայքարի գործում կարևորում է նաև Կ. Կավուրին: Թերթի կարծիքով Վիտտորիո Էմմանուել թագավորը միշտ առաջնորդվում էր Կ. Կավուրի խորհուրդներով և «նրան է պարտական իր հաջողությունների մեծ մասի համար»:

Оценка национальной борьбы видных деятелей Рисорджименто в газете «Мшак»

Феликс Мовсисян
доктор исторических наук, профессор, заведующий кафедрой истории Ванадзорского государственного университета им. Ов. Туманяна

Ключевые слова: Рисорджименто, Италия, свобода, независимость, родина, объединение, Джузеппе Мадзини, Виктор Эммануил II, Джузеппе Гарибальди.

Итальянское Рисорджименто, целью которого являлось свержение австрийского владычества и объединение Италии, нашло широкий отклик в армянском общественном сознании того времени и в периодической печати. Газета «Мшак» – пионер армянского либерального течения – обращалась к этому вопросу и подчеркивала роль лидеров Рисорджименто Джузеппе Мадзини, Джузеппе Гарибальди, короля Виктора Эммануила II и графа Камилло Кавура в объединении Италии.

Газета называла Дж. Мадзини «выдающимся республиканцем», «демократическим гением» и «большим патриотом», который еще со студенческих лет был увлечен идеей свободы и объединения своей родины. Несмотря на то, что Дж. Мадзини не смог объединить Италию, его произведения и его деятельность, по мнению газеты «Мшак», «сыграли значительную роль» в консолидации патриотических сил и руководстве национальной борьбой.

Газета «Мшак» особо высоко оценивала вклад Дж. Гарибальди в борьбу за объединение Италии, назвав его «великим итальянским патриотом», увековечившим свое имя заслугами перед Отечеством. По словам издания, Дж. Гарибальди постоянно призывал своих соотечественников к борьбе за свободу и на личном примере демонстрировал им образцы «непоколебимой решимости».

Газета «Мшак» характеризует короля Виктора Эммануила II как «выдающегося патриота и выдающегося государственного деятеля», преданного родине храброго воина, короля, который руководствуется интересами народа и государства. По данным газеты, король был осторожным человеком, никогда не делал решительных шагов, он позволял, чтобы каждый раз борьбу начинал популярный герой Дж. Гарибальди. Согласно газете «Мшак», имя Виктора Эммануила «занимает славное место в истории Италии».

«Мшак» также выделяет К. Кавура. По данным газеты, король Виктор Эммануил всегда руководствовался советами К. Кавура и «ему он обязан большей частью своих успехов».

* * *

Ներածություն: Իտալական Ռիսորջիմենտոյին անմիջականորեն արձագանքել են ժամանակի հայ հասարակական, քաղաքական բազմաթիվ գործիչներ, հրապարակախոսներ, գրողներ և մի քանի տասնյակ թերթեր ու ամսագրեր: Հայ հասարակական մտքի ազգային-պահպանողական, լիբերալ և դեմոկրատական հոսանքների ներկայացուցիչներն ու նրանց հրատարակած պարբերականները ընդհանուր առմամբ ճիշտ են ընկալել իտալական ժողովրդի

պայքարի էությունը: Հայ պարբերականների խմբագիրները իրենց հրապարակումներում պայքարի առաջին իսկ օրերից առաջ են քաշել և ընդգծել այն միտքը, որ իտալական ժողովրդի պայքարը կրում է ազատագրական բնույթ և ուղղված է ավստրիական միապետության դեմ: Նրանց կարծիքով իտալացիների պայքարը նպատակ է հետապնդում թոթափելու օտարի տիրապետության կապանքները, ձեռք բերելու ազատություն ու անկախություն, վերացնելու հայրենքի դարավոր քաղաքական մասնատվածությունը, միավորելու երկիրն ու ստեղծելու միասնական ազգային իտալական պետություն:

Իտալական Ռիսորջիմենտոն այս դիրքերից է լուսաբանում 1872 թ. Թիֆլիսում լույս տեսած «Մշակ» թերթը, որի հիմնադիր խմբագիր Գրիգոր Արծրունին իր ժամանակի պատգամախոսն էր: Գերմանիայի Հայդելբերգի համալսարանում կրթություն ստացած փիլիսոփայության դոկտոր Գրիգոր Արծրունին եվրոպական ազատականության գաղափարակիր էր, 1870-1890-ական թթ. արևելահայ մտավորականության շրջանում արևմտականների ընդգծված առաջնորդը: Վերջինս իր թերթի գլխավոր խնդիրներից մեկը համարում էր XIX դարում Եվրոպայում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունների լուսաբանումը, քաղաքակրթության, առաջընթացի, լուսավորության, գիտության ու մշակույթի ձեռքբերումների քարոզչությունը: Դրա վկայությունը XIX դարի վերջին քառորդին աշխարհում ընթացող քաղաքական իրադարձությունների պարբերաբար լուսաբանումն է «Մշակի» էջերում: Եվրոպական երկրներից ստացված պաշտոնական լուրերն ու մամուլի հրապարակումները Գրիգոր Արծրունին զետեղում է թերթի «Ազգային լուրեր» բաժնում, իսկ «Ազգային տեսություն» բաժնում կատարում է քաղաքական վերլուծություններ: Եվրոպական քաղաքական անցուդարձը լուսաբանելիս Գ. Արծրունին առաջնորդվում է հետևյալ սկզբունքով. «XIX դարի քաղաքական բարոյականությունն այս է. «Ես ապստամբվում եմ, ուրեմն ես կամ» (Արծրունի Գրիգոր, («Մշակ», 28.09.1878, 1):

Այս մտայնությամբ Գ. Արծրունին անդրադարձել է Իտալիայի միավորմանը, որն արդեն պատմական իրողություն էր, երբ լույս տեսավ նրա թերթը: Իտալական ազատագրական պայքարի հաջողության ու Ռիսորջիմենտոյի առաջնորդների նկատմամբ «Մշակի» խմբագրի հետաքրքրությունն այնքան մեծ էր, որ ցանկացած դիպված օգտագործում էր՝ ցույց տալու նրանց դերը իրենց հայրենիքի անկախության ու ազատության ձեռքբերման գործում: Ընդսմին, ըստ Գրիգոր Արծրունու, «ոչ մի տեղ ազգային գաղափարը չունեցավ այնքան զորեղ, համարձակ կուսակիցներ, ոչ մի տեղ բազմությունը այնքան չէր համակրում և մասնակցում հայրենիքը օտարների լծից ազատելու շարժման մեջ, որքան Իտալիայում: Ոչ մի տեղ այդ ժողովուրդը այնպես միաձայն չէր ձգտում ազգի զանազան մասերը միացնելու, որքան Իտալիայում» («Մշակ», 29.06. 1872, 2):

Ըստ «Մշակի»՝ 1859 թ. Իտալիան մասնատված, փոքր պետություններով կառավարվող երկիր էր, և Իտալիա ասելով՝ հասկանում էին Սարդինիայի փոքրիկ պետությունը: Իտալիան «կատարյալ պատրաստ չէր իր անկախության համար, նրա տնտեսական դրությունը չէր համապատասխանում այն մեծամեծ զոհաբերություններին, որոնք ծանրանալու էին նրա վրա՝ իր ազգային նպատակին հասնելու համար» («Մշակ», 23.08.1873, 3):

«Մշակն» արդարացի և «շատ բնական էր» համարում, որ Իտալիան միավորվեց, մեկ միություն դարձավ և այսօր «մի հզոր քաղաքական մարմին է»: Իտալացիները հասան «իրենց ազգային բաղձանքին», բայց «անկարելի է ուրանալ այն ճշմարտությունը», որ Իտալիայի միավորման գաղափարն «իրականություն դարձավ անօրինակ հեշտությամբ»: «Մշակը» դա

պայմանավորում էր Ֆրանսիայի ու Պրուսիայի ռազմական օգնությամբ, եվրոպական երկրների խճճված հարաբերություններով և այլ հարցերով զբաղված լինելով, իտալացիների մի քանի բարոյական հատկությունների շնորհիվ և «ճշմարիտ հայրենասիրությամբ, որից զուրկ են առավել քաղաքակիրթ ազգերը»։ Ըստ թերթի՝ իտալացիները, «անկեղծ հայրենասիրական ոգով վառված», մեծից փոքր, յուրաքանչյուր դասի, յուրաքանչյուր կուսակցության պատկանող մարդ՝ հարուստ թե աղքատ, «ձեռք ձեռքի տված գնում էին պատերազմի դաշտ՝ կա՛մ մեռնելու, կա՛մ հաղթելու, միայն թե հասնեին իրենց նպատակին» («Մշակ», 23.08.1873, 3)։

Իտալացիների հայրենասիրությունը, ազատատենչությունը և ազատության ձգտումն ընդգծելուց բացի՝ «Մշակը» կարևորում էր իտալական Ռիսորջիմենտոյի առաջնորդների դերն ազատագրական պայքարի գաղափարախոսություն ձևավորելու, իտալական ժողովրդին պայքարի հանելու, համախմբելու և առաջնորդելու ուղղությամբ։ Այս իմաստով թերթը Իտալիայի միավորման մեծ գաղափարի իրականացումն անխզելիորեն կապում էր իտալական ազատագրական պայքարի գաղափարախոս Ջուզեպպե Մացցինիի, ժողովրդական հերոս Ջուզեպպե Գարիբալդու, Սարդինիայի թագավոր Վիտտորիո Էմմանուել II-ի և վարչապետ կոմս Կամիլո Կավուրի անվան հետ։ Ըստ թերթի՝ նրանցից հատկապես «Մացցինիի և Գարիբալդու փառավոր անունները իտալացիների սրտերում անջնջելի կերպով դրոշմվեցին» («Մշակ», 29.06.1872, 2)։

Ջուզեպպե Մացցինիի ազգային պայքարի գնահատականը։ «Մշակը» Ջուզեպպե Մացցինիին անդրադարձել է նրա մահվան լուրն ստանալուն պես՝ հայտնելով, որ 1872 թ. մարտին Պիզա քաղաքում իր մահկանացուն կնքեց «երևելի հասարակապետական իտալացի Մացցինին» («Մշակ», 16.03.1872, 3)։ Թերթն իրավացիորեն Ջ. Մացցինիին անվանում է երևելի հանրապետական, որը, իրավամբ, XIX դարի Իտալիայի պատմության ամենապայծառ, ինտելեկտուալ, ազնվագույն ու ազնվաբարո քաղաքական գործիչներից էր, որի հայացքները հայրենիքի ազատագրության վերաբերյալ խորը հետք թողեցին իտալական հայրենասերների մի քանի սերունդների վրա։ Այս իրողությունից ելնելով՝ «Մշակը» կարևորում է թերթի ընթերցողներին Ջ. Մացցինիի կենսագրությանը ծանոթացնելը, որպեսզի նրանք տեղեկացված լինեն երևելի քաղաքական գործչի, գրողի, հրապարակախոսի և փիլիսոփայի անցած ճանապարհին ու գործունեությանը։

Թերթի հավաստի տեղեկություններով նա ծնվել է 1805 թ. հունիսի 22-ին Ջենովայում՝ բժշկի ընտանիքում, որը «քաղաքական համոզմունքներով պատկանում էր ժողովրդապետական կուսակցությանը»։ Երիտասարդ Ջ. Մացցինին իրեն նվիրեց իրավաբանությանը և կրթություն ստացավ Ջենովայի համալսարանում։ Ուսումնառության տարիներին նա «հրապուրվեց իր հայրենիքի միության և օտար լծից ազատագրվելու ցնորքին։ Այն ժամանակ այդ գաղափարը դեռևս ցնորք էր» («Մշակ», 23.03.1872, 3)։

«Մշակը» 1820-ական թթ. վերջին Ջ. Մացցիինի՝ Իտալիան ազատագրելու մտադրությունը «ցնորք» է անվանում այն պատճառով, որ 1820-1821 թթ. Նեապոլում ու Պիեմոնտում կարբոնարների գաղտնի ընկերությունների գլխավորած ազգային պայքարի պարտությունից հետո իտալական պետություններում արյունահեղ հաշվեհարդարի ու բռնությունների ալիք էր տարածվել։ Բացի դրանից՝ չկար որևէ քաղաքական կազմակերպություն, որն Իտալիան ազատագրելու ծրագիր ունենար (История Италии, 1970բ, 116-11; История XIX века, 1938գ, 496-505)։

Թերթի տեղեկություններով Ջ. Մացցինին դարձավ մի ուսանողական ընկերության անդամ, սկսեց աշխատակցել տեղական մամուլին, գրեց մի քանի քննադատական հոդվածներ, որոնք տպագրվեցին հիմնականում «L'Indicatore Genovese» լրագրում: Երբ այդ լրագիրը փակվեց, նա թղթակցեց «Subalpino» ու «Antologia» թերթերին: Նրա թղթակցությունների թվում շատերի ուշադրությունը գրավեց հատկապես «Դանթեի հայրենասիրությունը» («Dell'amor patrio di Dante») էսսեն («Մշակ», 23.03.1872, 3):

«Մշակի» հավաստի տեղեկություններով 1830 թ. նոյեմբերին Ջ. Մացցինին անդամագրվեց կարբոնարների գաղտնի ընկերությանը, որը նրան գործուղեց Տոսկանայի դքսություն՝ նոր անդամներ հավաքագրելու: Վերադառնալով Ջենովա՝ նա իր ընկերներից մեկի մատնությամբ ձերբակալվեց, դատապարտվեց ու բանտարկվեց Սավոնա բերդում: Թերթը ճիշտ է ներկայացնում Ջ. Մացցինիի բանտարկությունը: Վերջինս այդ օրերին խնդրեց Պասսանոյին իրեն տրամադրել այն կարբոնարների անունները, որոնց հետ կարող էր նամակագրություն ունենալ: Դրա համար հարկ եղավ, խախտելով բոլոր արարողակարգերը, նրան ձեռնադրել մասոն, շնորհել բարձր աստիճան, որպեսզի կարողանա նամակագրական կապ պահպանել կարբոնարների հետ (Морамарко, 1990, 21):

Ըստ «Մշակի»՝ բանտարկության մեջ հասկանալով կարբոնարների ընկերության թուլությունը՝ Ջ. Մացցինին կազմեց է մի նոր գաղտնի ընկերության նախագիծ: Բանտարկությունից ազատվելով՝ նա աքսորվեց հայրենիքից, գնաց Ֆրանսիա, որտեղ Լիոն քաղաքում, հրատարակեց իր «Ռիմինիի գիշերը» առաջին քաղաքական աշխատանքը: Այն վերաբերում էր 1831 թ. Ռոմանիա գավառում տեղի ունեցած ապստամբությանը: 1832 թ. Ջ. Մացցինին Ֆրանսիայի Մարսել քաղաքում հիմնեց «Երիտասարդ Իտալիա» գաղտնի ընկերությունը, որի «նպատակն էր ազատագրել իր հայրենիքը»: Այդ օրվանից սկսած՝ Ջ. Մացցինին եվրոպական մի երկրից անցնում էր մյուսը, միմյանց հետևից հիմնում էր «L'Aspostolato popolare» և «L'educatore» թերթերը: Վտարանդության մեջ գտնվող Ջ. Մացցինին ուղղորդում էր Իտալիայում ընթացող ապստամբական շարժումները, հրատարակում էր քաղաքական բնույթի հոդվածներ («Մշակ», 23.03.1872, 3):

«Մշակը» բավական հավաստի ներկայացնում է Ջ. Մացցինիի ուսանողական տարիները, լրագրողական գործունեությունը և «Երիտասարդ Իտալիա» գաղտնի կազմակերպության նպատակը: Ջ. Մացցինիի մտահղացմամբ «Երիտասարդ Իտալիան» պետք է դառնար միասնական համաիտալական հեղափոխական կազմակերպություն և ժողովրդական ապստամբության ճանապարհով նպաստեր Իտալիայի միավորմանը, ձևավորեր «Միասնական, ազատ, անկախ հանրապետական ազգ» (История Италии, 1970բ, 126; История XIX века, 1938գ, 512; Кирова, 1981, 9-27):

Գնահատելով Ջ. Մացցինիի՝ 1840-ական թթ. քաղաքական գործունեությունը՝ «Մշակը» գրում է. «Մի բան ուշադրության արժանի է, որ այդ մարդը միացնում է իր մեջ երկու ծայրահեղ ուղղություն, մի կողմից՝ հեղափոխական, որն իր նպատակին հասնելու համար ամբողջ հույսը դնում էր նոր սերնդի վրա, մյուս կողմից վերացյալ կրոնական գաղափարներից տիրապետած տարրին էր դիմում իր հայրենիքին օգնության հասցնելու համար, նրա քաղաքական ու բարոյական բարենորոգումների մեջ» («Մշակ», 23.03.1872, 3):

«Մշակը» ճիշտ է նկատում, որ Ջ. Մացցինին բարդ ու հակասական քաղաքական գործիչ էր: Թերթը նրա հեղափոխական գործունեությանը հակասող դրսևորում է համարում այն իրողությունը, որ 1843 թ. ամռանը «Երիտասարդ Իտալիայի» նախկին անդամ, «Իտալական

լեգեոն» գաղտնի կազմակերպության ղեկավար Նիկոլա Ֆաբրիցին Բոլոնիայում ապստամբություն բարձրացրեց և պարտություն կրեց: 1844 թ. հունիսին Կալաբրիայում Ջ.Մացցինիի գաղափարական ազդեցության տակ և անմիջական աջակցությամբ «Երիտասարդ Իտալիային» անդամագրված նախկին «Էսպերիա» գաղտնի ընկերության հիմնադիրներ Աթիլիո և Էմիլիո Բանդիերա եղբայրներն ապստամբեցին, դավաճանաբար գերի ընկան ու մահապատժի ենթարկվեցին՝ մահն ընդունելով «Կեցցե՛ Իտալիան» բացականչելով (История Италии,1970բ, 152; Кирова, 1981, 66-67): Մյուս կողմից Ջ. Մացցինին, ըստ «Մշակի», 1847 թ. Հռոմի Պիուս IX պապին հղած նամակում «նրան հրավիրում էր հավատալ և իրագործել Իտալիայի միությունը»: Ըստ այդմ՝ թերթը եզրակացնում է՝ «Ջ. Մացցինիի պես ժողովրդավարական հանճարը կարողացավ խաբվել պապական աթոռի վրա նստած աբեղայից իր առաջին ժամանակներում ցույց տված ազատամտություններով և նրա խոստացած բարենորոգումներով» («Մշակ», 23.03.1872, 3):

«Մշակը» նկատի ունի 1847 թ. սեպտեմբերի 8-ին Ջ. Մացցինիի՝ Պիուս IX պապին հասցեագրած բաց նամակը, որում, նշելով, որ «կոմունիստ չէ», նրան կոչ էր անում գլխավորել Իտալիայի անկախության և ազատության համար շարժումը, «միավորել Իտալիան, հռչակել առաջընթացի ու առաջադիմության նոր դարաշրջան» (Scritti editi e inedita di Giuseppe Mazzini, 1923, 225; История Италии, 1970բ, 160; Кирова, 1981, 70-71):

«Մշակը» այդ նամակի համար հանդիմանել է Ջ. Մացցինիին, որին Ավստրիայի կանցլեր Կլեմենս Մետտեռնիխը անվանում էր «Եվրոպայի ամենաազդեցիկ հեղափոխականը»: Թերթը հաշվի չէր առնում այն հանգամանքը, որ հեղափոխական Ջ. Մացցինին նպատակ էր հետապնդում օգտագործելու այդ պահին չափազանց մեծ հանրաճանաչություն ձեռք բերած Պիուս IX-ի ազդեցությունն ու ուժը Իտալիայի միավորմանը հասնելու գործում (King, 1960, 245-247; Chisalberti, 1967, 535-546): Այդ մտայնությունից ելնելով՝ 1847 թ. հոկտեմբերի 12-ին Հռոմի պապին հեռավոր Մոնտեվիդեոյից դիմում էր նաև Ջ. Գարիբալդին՝ հավաստիացնելով, որ պատրաստ է պայքարել նրա գործի համար, «որպեսզի դառնա նրա ազատագրական առաքելության մասնակիցը» (Nazionale, 1934, 83-84): Մինչդեռ Պիուս IX-ը դժգոհում էր իրեն արված այդ առաջարկություններից՝ ասելով. «Ինձնից ցանկանում են ինչ-որ Նապոլեոն ստեղծել այն դեպքում, երբ ես գյուղական աղքատ քահանա եմ» (История XIX века, 1938գ, 43):

Ռիսորջիմենտոյի գործիչներից հանրապետական Կառլո Կատանեոն՝ որպես առաջիններից մեկը, հերքեց Հռոմի պապի՝ «Իտալիայի ազատարար» և «փրկիչ» լինելը՝ անվանելով նրան «առասպել, որը պետք է ժողովրդին ստիպեր հավատալ ինչ- որ ճշմարտության» (Канделоро, 1956, 87): Ջ. Մացցինին նույնպես արագ հասկացավ, որ Իտալիայի միավորման ու կաթոլիկ եկեղեցու քահանայապետի աշխարհիկ իշխանությունն անհամատեղելի են: Նրա համոզմամբ Իտալիայի անկախությունն ու ազատությունը պահանջում է «վերացնել պապի աշխարհիկ իշխանությունը» (Кирова, 1981, 71):

1848 թ. ֆրանսիական հեղափոխության հաղթանակից հետո, ինչպես նշում է «Մշակը», Ջ. Մացցինին կազմեց «Իտալիայի ազատության համար մի ընկերություն՝ ազատության և ոչ հասարակապետության սկզբունքով» («Մշակ», 23.03.1872, 3): Թերթն իրավացի էր. 1848 թ. ապրիլին Ջ. Մացցինին անհապաղ վերադարձավ հայրենիք և Միլանում հիմնեց «L'Italia del popolo» թերթը և «Associazione nationale» ընկերությունը, որը նպատակ էր հետապնդում հասնելու Լոմբարդիայի միավորմանը Սարդինական թագավորությանը: Միլանի անկումից առաջ նա՝ որպես շարքային զինվոր, մտավ Ջ. Գարիբալդու ջոկատը, նրան ուղեկցեց մինչև

Կոմո, որտեղից իր կողմնակիցների հետ անցավ Շվեյցարիա: 1848 թ. օգոստոսի 9-ի զինադադարից հետո նա Ջ. Գարիբալդուն խոստացավ օգնել զենքով ու մարդկանցով, եթե պատերազմը վերսկսվի:

1849 թ. փետրվարին Ջ. Մացցինին վերադարձավ Ֆլորենցիա, փորձեց Տոսկանան միավորել Հռոմի Հանրապետությանը: Անհաջողություն կրելով՝ նա գնաց Հռոմ և Աուրելիո Սաֆֆիի ու Կառլո Արմելլինիի հետ գլխավորեց եռապետությունը (История Италии, 1970բ, 197-199; История XIX века, 1938ե, 66; Революции 1848-1849, 1952բ, 43; Кирова, 1981, 76-95):

Հռոմի Հանրապետության անկումից հետո Ջ. Մացցինին գրում էր. «Կյանքը վաղանցուկ է, վտարանդվելը՝ դառը: Ես ինձ հետ վտարանդիություն եմ տանում մաքուր խիղճ և կատարած պարտքի զգացում» (Кирова, 1981, 110-113): Տարիներ անց նա մնաց այն կարծիքին, որ Հռոմը դատապարտված էր և հնարավոր չէր փրկել (Революции 1848-1849, 1952բ, 51): Այս հարցում նրա հետ համամիտ չէր Ջ. Գարիբալդին, որը հետագայում իր հուշերում մատնանշում էր Ջ. Մացցինիի թույլ տված սխալները Հռոմի պաշտպանության հարցում (Гарибальди, 1966, 183- 184, 187- 188):

«Մշակի» գնահատմամբ մինչ Իտալիայի միավորումը Ջ. Մացցինին «նշանավոր դեր» է խաղացել երկրի քաղաքական կյանքում, հայենասիրական ուժերի համախմբման և հեղափոխական պայքարի ղեկավարման գործում: Նա «հեռվից առաջնորդում էր Իտալիայի ամեն հեղափոխական շարժմանը»: Թերթը դրանց թվում կարևորում է նրա անմիջական առնչությամբ տեղի ունեցած 1852 թ. Մանտուայի, 1853 թ. Միլանի և 1857 թ. Ջենովայի ապստամբությունները («Մշակ», 23.03.1872, 3): Չնայած Ջ. Մացցինիի կազմած «Երիտասարդ Իտալիայի» ծրագրում մերժվում էր դավադրական պայքարը, բայց նա գործնականում հաճախ էր դիմում պայքարի այդ ձևին: Դրա վկայությունը «Մշակի» նշած ապստամբություններն են, որոնք պարտություն կրեցին:

«Մշակի» դիտարկմամբ Ջ. Մացցինիի «ազդեցությունը կարծես նվազում է, երբ 1859 և 1860 թթ. Իտալիան Ֆրանսիայի օգնությամբ պատերազմ է սկսում ազատության համար» («Մշակ», 23.03.1872, 3): Թերթի դիտարկումը ճիշտ է. 1859 թ. հունվարին Պիեմոնտի վարչապետ կոմս Կամիլո Կավուրը Ֆրանսիայի կայսր Նապոլեոն III-ի հետ կնքեց գաղտնի համաձայնագիր, որով Ավստրիայի դեմ տարած հաղթանակից հետո Լոմբարդիան պետք է միավորվեր Պիեմոնտին: Դրանով Իտալիայի միավորման գործը ստանձնեց 1859 թ. Թուրինում Իտալիայի «Մեծ արևելք» օթյակին անդամագրված Կ.Կավուրը: Ռիսորջիմենտոյի երևելի գործիչներից շատերն էին մասոն, բայց հատկապես Ջ. Գարիբալդու և Կ. Կավուրի նման մեծ մասոնների «շուրջ էր բևեռացած այդ ժամանակի Իտալիայի մասոնական կյանքը» (Морамарко, 1990, 122) և Իտալիայի միավորման գաղափարը:

1859 թ. փետրվարի 21-ին Ջ. Մացցինին 151 հանրապետականների հետ մանիֆեստ ստորագրեց՝ ընդդեմ Վիտորիո Էմմանուելի ու Նապոլեոն III-ի դաշինքի: Նա, ի հակադրություն Վիտտորիո Էմմանուելի՝ Հյուսիսիտալական թագավորություն ստեղծելու մտադրությանը, հանդես եկավ ամբողջ Իտալիան ազատագրելու համար ժողովրդական լայն շարժում ծավալելու օգտին: 1860 թ. ամռանը, երբ Ջ. Գարիբալդին ազատագրեց Սիցիլիան, իսկ սեպտեմբերին՝ Նեապոլը, Ջ. Մացցինին գնաց Ջ. Գարիբալդու մոտ և նրան հորդորեց արշավել Հռոմի վրա: Նա մտադիր էր երեք հազար կամավոր հավաքել և միանալ պայքարին, բայց չկարողացավ դրա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ ձեռք բերել:

1862 թ. Ջ. Մացցինին ողջունեց Ջ. Գարիբալդու՝ Հռոմն ազատագրելու փորձը, թեպետ գտնում էր, որ Իտալիան միավորելու համար հարկավոր է սկզբում ազատագրել Վենետիկը: Այդ նպատակով 1864 թ. աշնանը Ջ. Մացցինիի աջակցությամբ Էժիստո Բեցցին Վենետոյի լեռներում ապստամբություն բարձրացրեց և առանց դժվարության ջախջախեց կառավարական զորքը (Кирова, 1981, 152-154):

«Մշակն» այնուհետև գրում է, որ մինչև 1866 թվականը Ջ. Մացցինին իր հայրենիքում դատապարտված էր մահապատժի: 1866 թ. իտալական կառավարությունը նրան ներում շնորհեց և թույլատրեց հրատարակել 12 հատոր կազմող իր գրական ժառանգությունը («Մշակ», 23.03.1872, 3): Դա տեղի ունեցավ 1866 թ. Ավստրիայի դեմ Պրուսիայի և Իտալիայի տարած հաղթանակից հետո, երբ Վենետիկը միավորվեց Իտալիայի հետ:

Ջ. Մացցինին չցանկացավ օգտվել այդ համաներումից, թեև այդ ընթացքում մի քանի անգամ ընտրվել էր իտալական խորհրդարանի անդամ (Кирова, 1981, 156-157): «Այդ ժամանակից սկսած,– նկատում է «Մշակը»,– Ջ.Մացցինին կարծես հետ է քաշվում քաղաքական գործունեությունից և այլևս չի հետևում Եվրոպայի հեղափոխական շարժմանը: Նա կարծես իր լռությամբ հայտնում է, որ իր դերն ավարտվեց: Նա կարծես այլևս չէր հասկանում վերջին ժամանակի Եվրոպայի շարժումը» («Մշակ», 23.03.1872, 3):

Իրականում Ջ. Մացցինին քաղաքական պայքարից չհեռացավ: 1866 թ. աշնանը

նա աշնանը փորձեց Հռոմն ազատագրելու նպատակով կամավորների արշավանք կազմակերպել և Հռոմում ապստամբություն բարձրացնել, բայց հաջողության չհասավ: Այդ օրերին Ջ. Գարիբալդին հուսահատված Ջ. Մացցինին գրում էր, որ «ցավոք, նա պատրանքներ է կառուցում երկրի տրամադրությունների մասին, որը հիմա չի կարող համապատասխանել Ձեր պահանջներին» (Кирова, 1981, 158):

«Մշակը» գրում է, որ մահվանից մոտ մեկ տարի առաջ Ջ. Մացցինին «հրապարակայնորեն հերքեց իր համակրությունը դեպի Ինտերնացիոնալ աշխատողների ընկերությունը» («Մշակ», 23.03.1872, 3): Թերթն իրավացիորեն նշում էր՝ Ջ. Մացցինին ողջունեց 1864 թ. սեպտեմբերին Լոնդոնում հիմնված Առաջին ինտերնացիոնալը, որում տեսնում էր 1834 թ. իր ստեղծած «Երիտասարդ Եվրոպա» միության «բանվորական տարատեսակը»: 1871 թ. գարնանը գաղափարական տարաձայնությունների պատճառով նա դադարեց համագործակցել Ինտերնացիոնալի հետ (Кирова, 1981, 165-168):

«Մշակի» տեղեկություններով 1872 թ. մարտի 10-ին, երբ Իտալիայի խորհրդարանում ստացվեց Ջ. Մացցինիի մահվան լուրը, տարբեր կուսակցություններ ներկայացնող պատգամավորները «միավորվեցին մի զգացմունքի մեջ և հասարակական երևելի մարդու մահվան պատճառով հայտարարեցին իրենց սրտի խոր ցավակցությունը» («Մշակ», 23.03.1872, 3): Ըստ թերթի՝ Ջ. Մացցինիի հուղարկավորման ժամանակ նրա դագաղի հետևից քայլում էր 12 հազար մարդ, մեծ մասամբ ուսանողներ, գավառների ու քաղաքների պատգամավորներ, աշխատավորների ընկերություններ և «ֆրան-մասոն կոչվող ընկերության ներկայացուցիչներ» («Մշակ», 30.03.1872, 3):

Ջ. Մացցինիի հուղարկավորությունը Ջենովայում, իսկապես, զանգվածային ու աննախադեպ էր, որին մասնակցում էր 50-100 հազար մարդ: Այդ օրը, ի պատիվ Ջ. Մացցինի, որը Իտալիայի «Մեծ արևելք» օթյակի Մեծ վարպետ էր (Морамарко, 1990, 121; Ридли., 2007, 256; Карпачев, 2008, 246) և Ադամ Վայսհաուպտի մահից հետո բավարական իլլումինատների

առաջնորդը (Гоголицин, 2010, 139), Հռոմի փողոցներում թույլատրեցին մասոնական դրոշներ կախել:

«Մշակը» հետագայում գրում է, որ 1875 թ. մարտի 10-ին՝ «մեծ իտալացի ազգասերի մահվան տարեդարձի օրը», Հռոմի Կապիտոլիումի թանգարանի դահլիճներից մեկում տեղադրվեց Ջ. Մացցինի արձանը («Մշակ», 27.03.1875 4), իսկ 1882 թ. հունիսի 10-ին Ջենովայում կատարվեց նրա արձանի բացման հանդեսը («Մշակ», 23.01.1882, 3): Ջ. Մացցինիի արձանը բացվեց Ջենովայի արվարձան Ստալենոյի հանրահայտ գերեզմանատանը: Սպիտակ մարմարից պատրաստված հուշարձանում Ջ. Մացցինին պատկերված է բարձր սյան վրա, որի պատվանդանի աստիճաններին նստած է «սգացող Իտալիան», իսկ նրա մոտ՝ «Dio e popolo» նշանաբանով դրոշը պարզած մի պատանի:

Գնահատելով Ջ. Մացցինիի դերը Իտալական ազգային-ազատագրական պայքարում՝ «Մշակը» շեշտում է, որ «իր ստեղծագործություններով ու գործունեությամբ նա չկարողացավ հաստատել Իտալիայի միությունը»: Բայց դա ամենևին չի նսեմացնում նրա արժանիքները: Թերթի խորին համոզմամբ «անկարելի է հերքել այն մեծ ազդեցությունը, որ նա ունեցավ՝ հարուցելով իր հայրենիքի մեջ ազգասիրական զգացմունքը, և գրգռեց երիտասարդությունը դեպի զոհաբերությունները» («Մշակ», 23.03.1872, 3):

Ջուզեպպե Գարիբալդու ազգային պայքարի գնահատականը: «Մշակի» խմբագիր Գրիգոր Արծրունու համոզմամբ թերթի ընթերցողներին կհետաքրքրի տեղեկանալ «մահկանացուն կընքող աշխարհածանոթ անմահ զորապետի կենսագրությունը»: Ելնելով այս մտայնությունից՝ նա ներկայացնում է «դյուցազն զորավարի կյանքի մեջ տեսնված զարմանալի արագ փոփոխությունները» («Մշակ», 12.06.1882, 1): Թերթը գրում է, որ Ջ. Գարիբալդին մանուկ հասակից եղել է նավաստի, ուստի «ամեն բանի մեջ աներկյուղ հանդիսացավ»: 1834 թ. նա Ջուզեպպե Մացցինիի հետ մասնակցեց Սարդինիայի թագավոր Կառլ Ալբերտի «կառավարության դեմ դավադրությանը»: Մեծ դժվարությամբ դրանից ազատվելուց հետո՝ երկու տարի անց, նորից ընդվզեց: Ըստ թերթի՝ այս անգամ նա մահվան դատապարտվեց, կրկին կարողացավ փախչել և գնաց Ֆրանսիա: Թերթը նկատի ունի Ջենովայում Ջ. Գարիբալդու անհաջող ապստամբությունն ու վտարանդվելը Մարսել, որտեղ ֆրանսիական «Peuple son verain» թերթից տեղեկացավ «իրեն ամոթալի մահվան դատապարտելու մասին» (G. Secerdote, 1933, 96-98; Гарибальди, 1966, 21):

«Մշակն» այնուհետև պատմում է, որ 1838 թ. Ջ. Գարիբալդին գնաց Հարավային Ամերիկա, Ուրուգվայում կռվեց Բրազիլիայի դեմ՝ պաշտպանելով Ռիո Գրանդայի հանրապետությունը: Այստեղ նա ձերբակալվեց, դատապարտվեց, բայց ներում ստանալով՝ անմիջապես ապստամբություն բարձրացրեց բռնապետ Խուան Ռոսասի դեմ: Նա իր 800 կողմնակիցների հետ, որոնք կարմիր շապիկ էին կրում, կռվեց և «հրաշքով կարողացավ ազատվել վրեժխնդրությունից» («Մշակ», 12.06.1882, 1):

«Մշակը» ճիշտ է ներկայացնում Ջ. Գարիբալդու ազատագրական պայքարը Հարավային Ամերիկայում: Այստեղ ստանալով հայրենիքում սկսված պատերազմի լուրը՝ նա 1848 թ. ապրիլի 15-ին 63 կամավորներով Մոնտեվիդեոյում նավ նստեց ու եկավ Թուրին, որտեղ իրեն «սպասում էր գեղեցիկ ու վեհ խնդիր՝ հայրենիքի ազատագրումը» (Гарибальди, 1966, 149, 243; Галло, 1998, 127-129; Невлер (Вилин), 1959, 7-8): Ըստ թերթի՝ Ավստրիայի դեմ պատերազմող Պիեմոնտի թագավոր Կառլ Ալբերտին նա «անձնվեր ծառայություն մատուցելու» առաջարկություն արեց, բայց թագավորը մերժեց նրան: «Հանրապետական Գարիբալդին,– գրում է «Մշակը»,– որ

պատրաստ էր իր գլխից հրաժարվել, քան թե իր համոզմունքներից, չէր զլանում միանալ միապետականներին և միասին մաքառել թշնամու դեմ: Դա շատ հազվագյուտ և անօրինակ երևույթ է, որը հեշտացրեց գործի հաջողությունը, որը պատիվ է բերում իտալական ազգին» («Մշակ», 23.08.1873, 3):

«Մշակը» գրում է, որ Միլանի ժամանակավոր կառավարությունը օգտվեց Ջ. Գարիբալդու առաջարկությունից: Վերջինս Ջ. Մացցինիի հետ զորք հավաքեց և Տիրոլում Ավստրիայի դեմ պատերազմեց: Միլանի անձնատվության ժամանակ նա «վերջինը զինաթափ եղավ» («Մշակ», 12.06.1882,1): Թերթն իրավացիորեն նկատեց՝ Ջ. Գարիբալդին չճանաչեց 1848 թ. օգոստոսի 9-ին Պիեմոնտի ու Ավստրիայի միջև Վիջեվանոյում կնքված հաշտության պայմանները, որոնցով վերականգնվում էին երկու երկրների 1815 թ. սահմանները: Օգոստոսի 13-ին իտալացիներին հղած կոչում նա հայտարարեց, որ այսուհետև կռվելու է «հանուն հայրենիքի ու իտալական ազգի» (Гарибальди, 1966, 154-168) և 1848 թ. դեկտեմբերին օգնության գնաց պայքարը շարունակող Հռոմին: «Մշակի» հավաստի տեղեկություններով 1849 թ. Ջ. Գարիբալդին «դյուցազնաբար պաշտպանեց Հռոմն ու հանրապետությունը»: Հռոմի մոտալուտ կորուստը տեսնելով՝ նա իր զորքով դուրս եկավ քաղաքից, ճեղքեց թշնամու պաշարման օղակը, զինվորներին ազատ արձակեց և 200 հավատարիմ մարդկանց հետ մտավ Ադրիատիկ ծով: Չկարողանալով օգնության հասնել պաշարված Վենետիկին՝ նա գնաց Ամերիկա, որտեղ ապրուստի միջոցներ հայթայթելու համար ստիպված էր սնագործ աշխատանք կատարել («Մշակ», 12.06.1882, 1):

Ըստ «Մշակի»՝ 1859 թ., երբ «Իտալական անկախության պատերազմը սկսեց», Ջ. Գարիբալդին Ամերիկայից շտապ վերադարձավ հայրենիք: Պիեմոնտի թագավոր Վիտտորիո Էմմանուելը Ջ. Գարիբալդու՝ «իր դրոշի տակ կռվելու» առաջարկությունը չմերժեց, այլ «հրապարակավ նրան համբուրելով՝ սիրալիր ընդունելություն արավ» և 1859 թ. մայիսին գեներալի կոչում շնորհեց: Ջ. Գարիբալդին «Ալպյան որսորդներ» անունով կամավորների գունդ հավաքեց և մտավ Լոմբարդիա: Ավստրիայի դեմ կռվում նա գրավեց Վարեզեն, Կոմոն և ավստրիացիներին դուրս մղեց Միլանից ու «ամբողջ Եվրոպան զարմացրեց: Նա մասնակցեց Մաջենտայի ու Սոլֆերինոյի կռիվներին: Վիլլաֆրանկայի հաշտությունն ու Ցյուրիխի պայմանագիրը նա շատ ծանր տարավ» («Մշակ», 14.01.1878 3, 12.06.1882, 1):

«Մշակն» իրավացիորեն նշում է, որ Ջ. Գարիբալդին դժգոհ մնաց 1859 թ. հուլիսի 11-ի Վիլլաֆրանկայի ու օգոստոսի 11-ի Ցյուրիխի հաշտության պայմանագրերից, որով Լոմբարդիան անցնում էր Սարդինիայի թագավորությանը, իսկ Վենետիկը մնում էր Ավստրիային: Նա շարունակեց պայքարը, ըստ «Մշակի» «անձնական պատասխանատվությամբ, իր դրոշի վրա գրելով Վիտտորիո Էմմանուելի անունը», 1860 թ. «հազար կամավորներով ձեռնարկեց Սիցիլիայի ազատագրումը»: Ջ. Գարիբալդին գնաց Մարսալա, պարտության մատնեց Նեապոլի թագավոր Ֆրանչեսկո II-ի զորքին, հունիսի 21-ին պաշարեց Պալերմոն և գրավեց Մեսսինան: Երեք ամիս անց Ջ. Գարիբալդին տիրեց բոլոր նահանգներին, սեպտեմբերի 7-ին մտավ Նեապոլ, երկու Սիցիլիաները միավորեց «Իտալիայի պետության հետ, իր դիկտատորությունը հանձնեց Վիտտորիո Էմմանուելին, որին հռչակեց Իտալիայի թագավոր» («Մշակ», 23.08.1873,3, 14.01.1878, 3, 12.06.1882, 2):

Ճիշտ ներկայացնելով «Իտալիա և Վիտտորիո Էմմանուել» կարգախոսով իրականացրած Սիցիլիական արշավանքը, Սիցիլիայի, Նեապոլի ազատագրումն ու դրանց միավորումը Սարդինական թագավորության հետ (История Италии, 1970բ, 227-237; История XIX века, 1938գ,

280-286; Галло, 1998, 239-268)՝ «Մշակն» իրավացիորեն գրում է, որ Իտալիայի ամբողջական միավորման համար «մնում էր ազատագրել Հռոմն ու Վենետիկը»: Այդ նպատակով 1862 թ. Ջ. Գարիբալդին կրկին արշավեց Կալաբրիա: Օգոստոսի 29-ին թագավորական բանակը գնդապետ Պալլավիչինիի հրամանատարությամբ Ասպրոմոնտե լեռան վրա նրա ճանապարհը փակեց: Կռիվ սկսվեց, Ջ. Գարիբալդին ոտքից վիրավորվեց, գերի ընկավ և «անտարակույս կմեռներ, եթե ֆրանսիացի վիրաբույժը գնդակը նրա ոտքից չհաներ» («Մշակ», 29.06.1872, 3, 12.06.1882, 2):

«Մշակի» հավաստի տեղեկություններով 1864 թ. Ջ. Գարիբալդին «հաղթական ճանապարհորդություն կատարեց Անգլիայում», որտեղից վերադառնալով՝ Նեապոլից պատգամավոր ընտրվեց Իտալիայի խորհրդարանում և «միանգամայն իտալական Ֆրան-Մասոնի ընկերության գլխավոր անվանվեց» («Մշակ», 12.06.1882, 2):

«Մշակն» իրավացի էր. վարչապետ լորդ Պալմերսթոնի հրավերով Անգլիա մեկնած Ջ. Գարիբալդուն Սաութհեմփթոնում, Ուայթ կղզում ու Լոնդոնում աներևակայելի ջերմ ու փառավոր ընդունելություն ցույց տվեցին և մեծամեծ պատիվների արժանացրին (Канделоро, 1971, 234; Галло, 1998, 317-319): Վերադառնալով հայրենիք՝ Ջ. Գարիբալդին, որը դեռևս 1844 թ. Բրազիլիայում անդամագրվել էր «L'Asile de la Vertu» և Մոնտեվիդեոյի «Les Amis de la Patrie» մասոնական օթյակներին, 1864 թ. ընտրվեց Իտալիայի «Մեծ արևելք» օթյակի մեծ Վարպետ: 1872 թ. Ջ. Գարիբալդին ցմահ ընտրվեց այդ օթյակի Պատվավոր մեծ վարպետ (Морамарко, 1990, 278; Ридли, 2007, 256; Гало, 1998, 102, 320):

1866 թ. հունիսին սկսված ավստրո-պրուսական պատերազմում, ինչպես նշում է «Մշակը», Ջ. Գարիբալդին հաջողությամբ կռվում էր Տիրոլում: Հուլիսի 3-ին Սադովայի տակ ավստրիացիների «աղետալի վախճանը նրան կրկին իր կղզին ուղարկեց» («Մշակ», 12.06.1882, 2): 1866 թ. հոկտեմբերի 3-ի Վիեննայի հաշտության պայմանագրով Վենետիկն անցավ Իտալիային, բայց Ջ. Գարիբալդին շարունակեց պայքարը: 1866 թ. դեկտեմբերին, երբ ֆրանսիական զորքը դուրս եկավ Պապական պետությունից, Ջ. Գարիբալդին, օգտվելով դրանից, նորից փորձեց Հռոմն ազատագրել, անհաջողություն կրեց ու վերըստին ձերբակալվեց: Կապրերա տանելու ճանապարհին նա, լինելով ռազմական նավի հսկողության տակ, փախավ, գնաց Ֆլորենցիա և իր կամավորներով Մոնթե Ռոտոնդոյի կռվում հաղթանակ տարավ: 1867 թ. նոյեմբերին նա պարտություն կրեց ու կրկին քաշվեց Կապրերա («Մշակ», 14.01.1878, 4, 12.06.1882, 2): Թերթն իրավացի էր. նոյեմբերին նա Մենտանայում պարտություն կրեց ֆրանս-հռոմեական զորքից, որով Ջ. Գարիբալդու՝ Հռոմն ազատագրելու վերջին փորձը նույնպես ավարտվեց անհաջողությամբ (Гарибальди, 1966, 326-343; История Италии, 1970բ, 250-251; История XIX века, 1938գ, 294-297; Галло, 1998, 354-373):

«Մշակը» զարմանք էր հայտնում, որ 1870 թ. հուլիսի 19-ին սկսված ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ Ջ. Գարիբալդին, «փոխանակ Հռոմի մասին մտածելու, գնաց Փարիզ՝ ֆրանսիացիներին օգնության»: Թերթն ընդգծում է, որ «շնորհապարտ Ֆրանսիան, չորս նահանգների ներկայացուցիչ անվանելով, պատվեց վեհանձն զորավարին» («Մշակ», 12.06.1882, 2):

«Մշակը» նկատի ունի ֆրանս-պրուսական պատերազմում Ջ. Գարիբալդու ցուցաբերած ռազմական օգնությունը ֆրանսիական Ազգային պաշտպանության կառավարության Վոգեզյան բանակին: Նա գնաց Ֆրանսիա՝ «այդ դժբախտ երկրին տալու այն, ինչ իրենից մնացել էր» (Гарибальди, 1966, 365): Ըստ Վիկտոր Հյուգոյի՝ Ջ. Գարիբալդին «ֆրանսիացիների կողմից կռված բոլոր գեներալներից միակն էր, որը պարտություն չկրեց» (Hugo, 1871): Նա Ֆրանսիային

մատուցած ծառայությունների համար 1871 թ. փետրվարի 5-ին չորս դեպարտամենտներից ընտրվեց Ազգային ժողովի պատգամավոր, բայց օրեր անց հրաժարվեց պատգամավորի մանդատից (Шури, 1970, 171; История Парижской Коммуны 1871 года, 1971, 170, 662-678; Галло, 1998, 320)։ Նա լքեց Ֆրանսիան՝ «գիտակցելով, որ այլևս ոչինչ չի կարող անել այդ թշվառ երկրի համար, որին եկավ ծառայելու, երբ հայտնվել էր դժբախտության մեջ» (Гарибальди, 196, 366)։

Ջ. Գարիբալդու կենսագրությունից երևում է,– նշում է «Մշակը»–, ոչ միայն նրա «անցկացրած հուզումնալից կյանքը, ամբողջ էությամբ հայրենիքին ծառայություն մատուցելու նվիրվածությունը, այլև օտար ազգերի ազատության համար նույնքան անձնվիրաբար պայքարը» («Մշակ», 12.06.1882, 2)։

Ըստ «Մշակի»՝ Իտալիայի միավորման համար պայքարը հաջողությամբ ավարտելուց հետո Ջ. Գարիբալդին շարունակում էր մնալ իր հայրենակիցների ուշադրության կենտրոնում՝ չկորցնելով իր ժողովրդականությունը։ Իտալական մամուլը անհանգստացած գրում էր 1874 թ. մայիսին նրա առողջության հանկարծակի վատթարացման, 1875 թ.՝ իր «հազարյակի արշավանքին» նվիրված գրքի ու Հռոմի բնակչության կողմից որպես Իտալիայի խորհրդարանի պատգամավոր «փառավոր ընդունելության արժանանալու» մասին։ Ջ. Գարիբալդին, «մի կողմ թողնելով քաղաքական ձգտումները», զբաղված էր տնտեսական ծրագրերով։ Նրա առաջարկությամբ Իտալիայի խորհրդարանը զգալի գումար հատկացրեց Հռոմի նահանգում ճահիճները չորացնելու ու Տիբր գետի հունը մաքրելու համար («Մշակ», 13.06.1874, 4, 07.11.1874, 3, 30.01.1875, 3, 20.02.1875, 3, 26.07.1975, 3)։

«Մշակը» հանգամանորեն անդրադարձել է Ջ. Գարիբալդու մահվանը, որի կապակցությամբ մեկ տասնյակից ավելի հոդվածներում մանրամասնորեն ներկայացրել է նրա կյանքի վերջին օրերը, ժամերը, հիվանդությունը և մահվանից առաջ կազմած կտակը։ «Մշակի» դիտարկմամբ Ջ. Գարիբալդու մահվան «լուրը ցավալի տպավորություն թողեց ամբողջ Իտալիայում»։ Հունիսի 2-ին ամենուրեք փակվեցին բոլոր ուսումնարանները, համալսարանները, թատրոնները, խանութներն ու բորսան, անգամ դատարաններն ու վարչական հաստատությունները։ Բոլոր թերթերը, բացի կղերականներից, լույս «տեսան սև շրջանակով և նրա կենսագրությունը ներկայացնող գովասանքներով»։ Ջենովայում հետաձգվեց մացցինիական տոնախմբությունը։ Երկրով մեկ հանգանակություն սկսվեց՝ Ջ. Գարիբալդու արձանը կանգնեցնելու համար։

Հունիսի 3-ին Իտալիայի Սենատը որոշեց Ջ. Գարիբալդու հիշատակը հարգելու համար դադարեցնել իր նիստերը մինչև հունիսի 12-ը։ Սենատի անդամները երկու ամիս սգո հագուստ պիտի կրեին՝ ամբողջ կազմով մասնակցելով Հռոմում նրա հիշատակին նվիրված արարողությանը։ Սենատը միաձայն հաստատեց ներքին գործերի նախարարի բոլոր առաջարկությունները՝ Ջ. Գարիբալդու հիշատակը հարգելու համար։ Կառավարության նախագահի առաջարկությամբ հունիսի 4-ին նախատեսված ու սահմանադրության օրվան նվիրված տոնակատարությունը տեղափոխվեց հունիսի 18-ին։ Կառավարության որոշմամբ Ջ. Գարիբալդու հուղարկավորությունը կկայանա պետության միջոցներով, նրա ընտանիքի յուրաքանչյուր անդամ տարեկան 10 հազար լիրա թոշակ կստանա, նրա համար «կկառուցվի ազգային արձան», Կապրերա կղզին այսուհետև կկոչվի նրա անունով («Մշակ», 05.06.1882, 3-4, 08.06.1882, 2-3)։

Ինչպես եզրակացնում է «Մշակը», այս ամենը վկայում է այն մասին, որ «Իտալիան ներկայացնում է մի հոգով ապրող, մեծ ու ազնիվ ազգության, որ զգում է իր

արժանավորությունը», երբ խոսքը հայրենիքի համար թանկագին ու գնահատելի մարդկանց մասին է: «Մշակի» գնահատմամբ այդ եզակի մարդկանցից մեկը Ջ. Գարիբալդին է, որի «նման հերոսները թանկ են հայրենիքի համար, կազմում են նրա փառքը, պատիվն ու մեծությունը: Նրանք վճռում են ժողովրդի ճակատագիրը, այդ ժողովրդի ծնունդն են ու պատկերը» («Մշակ», 09.06.1882, 3):

«Մշակը» Ջ. Գարիբալդուն բնութագրում է որպես «ազատության համար հոգին տվող, սկզբունքի համար կրակի, կայծակների դեմ մարտնչող, վախ կոչված բանը մտքում չանցկացնող, անվեհեր քաջամարտիկ զորապետ» («Մշակ», 12.06.1882,1): «Մշակի» խմբագիր Գ. Արծրունու դիտարկմամբ «մեծ իտալացու մահը աննկարագրելի վիշտ պատճառեց»: Դրանում համոզվում ենք իտալական լրագրերում Ջ. Գարիբալդու՝ սև շրջանակներով պատված կենսագրությունը կարդալիս, որում «անզսպելի սուգ է նշմարվում, կարծես թե Իտալիան կրում է ազգային ամենասարսափելի դժբախտությունը»: Ջ. Գարիբալդու մահվան մասին «գրում ենք և լաց ենք լինում» խոսքերը, ըստ «Մշակի», «համարձակ կարող են ասել Իտալիայի հասարակական կարծիքն արտահայտող բոլոր լրագրերը»: Դրա վկայությունը «Մշակը» համարում է ոչ միայն իտալական ու եվրոպական մամուլի բազմաթիվ հրապարակումները, այլև Իտալիայի խորհրդարանի նախագահի, կառավարության անդամների ու պատգամավորների՝ Ջ. Գարիբալդուն տված գնահատականը: Ըստ թերթի՝ հունիսի 3-ին Իտալիայի խորհրդարանի նախագահը, բացելով նիստը, հայտարարեց. «Իտալիայի վրա ազգային դժբախտություն է ծանրացել. մահացավ Ջուզեպպե Գարիբալդին»: Նա ներկայացրեց «իտալական ամենամեծ քաղաքացու երևելի գործերը ու հայրենիքին մատուցած անձնազոհ ծառայությունները»: Նույն նիստում Ֆ. Կրիսպին իր խոսքում նշեց, որ Ջ. Գարիբալդին սովորական «մարդ չէր, այլ գերբնական էակ, անմատչելի ուժ»: Խորհրդարանի պատգամավոր Բաները հայտարարեց, որ Ջ. Գարիբալդուն բնութագրելու համար «անհրաժեշտ խոսքեր չկան», նրա ու Իտալիայի «անունները կանցնեն սերնդեսերունդ, անբաժան, անխզելի կապերով միացած» («Մշակ», 09.06.1882, 2-3):

«Մշակը» նշում է, որ Ջ. Գարիբալդու մահը սոսկ Իտալիային վիշտ չպատճառեց, այլև «ամբողջ Եվրոպայի մեջ հարգանք բարձրացրեց դեպի իտալական մեծ ազգասերի հիշատակը»: Մասնավորապես հունիսի 3-ին Ֆրանսիայի խորհրդարանը, «մեծ իտալացու» հիշատակը հարգելով, դադարեցրեց նիստերը, կառավարությունը որոշեց պատվիրակություն ուղարկել՝ նրա հուղարկավորությանը մասնակցելու համար, Փարիզի գլխավոր փողոցներից մեկը անվանակոչվեց Ջ. Գարիբալդու անունով: Կառավարության ղեկավար Լեոն Գամբետան, նախկին վարչապետ Շառլ Ֆրեսյինեն, անվանի գրող Վիկտոր Հյուգոն, տասնյակ ընկերություններ, միություններ ու քաղաքներ իրենց ցավակցությունը հայտնեցին «երևելի իտալացու մահվանը, համակրություն՝ Իտալիային»: Հանգանակություն է կատարվում Փարիզում՝ Ջ. Գարիբալդու արձանը կանգնեցնելու համար: Իտալական ժողովրդի համար այս ծանր պահին, ըստ «Մշակի», «ֆրանսիական ժողովուրդը ցույց տվեց, որ մյուսներից ավելի է հասկանում իտալական հերոսի մեծությունը և նրա հիշատակը մյուսներից ավելի է սրբազան համարում իր համար» («Մշակ», 12.06.1882, 3):

Ըստ թերթի՝ Լոնդոնի իռլանդական համայնքի ժողովում «գովասանական բազմաթիվ ճառեր ասվեցին Իտալիայի անկախության հերոսի պատվին»: Ժողովը միաձայն որոշմամբ նրա ընտանիքին հղեց ցավակցական նամակ, որում ասվում է. «Միայն Ջ. Գարիբալդու

ազգասիրության և ժողովրդի մեջ նրա գրգռած ոգևորության շնորհիվ Իտալիային հաջողվեց տեղ բռնել մեծ տերությունների շարքում» («Մշակ», 12.06.1882, 3)։

«Մշակն» այնուհետև մանրամասն նկարագրում է Ջ. Գարիբալդու՝ Կապրերա կղզում հունիսի 6-ին կայացած հուղարկավորությունը, որի ժամանակ դամբանական ճառեր ասացին Սենատի անդամ Վիտտորիո Ալֆիերին, պատգամավոր Լուիջի Ֆարինին, արդարադատության նախարար Ջուզեպպե Զանարդելին, ռազմական նախարար Ֆրանչեսկո Ֆերրեռն, Ջ. Գարիբալդու զինակից Ֆրանչեսկո Կրիսպին («Մշակ», 12.06.1882, 1-2)։

«Մշակի» բնութագրմամբ Ջ. Գարիբալդին սոսկ նավապետ, արհեստավոր, գրող, ինքնակենսագիր, զորավար, ազատության և անկախության մարտիկ ու քաղաքագետ չէր, այլև պետական մտածողությամբ օժտված մեծ անհատ։ Նա մահվանից առաջ հանրապետական կուսակցության առաջնորդին գրած իր վերջին նամակում խորհուրդ էր տալիս չքննադատել իտալական միապետությունը։ Նրա կարծիքով Սավոյան արքայատոհմը «Իտալիայի համար շատ գործեր է կատարել և սիրո ու հարգանքի արժանի է»։ Նրան պաշտպանում է իտալական ժողովրդի մեծամասնությունը, ուստի մենք պարտավոր ենք «հարգել մեծամասնության կամքը։ Չճանաչելով այդ կամքը և դրա դեմ պայքարելով՝ մենք ներքին պատերազմ կհարուցենք և կքանդենք մեր սեփական գործը» («Մշակ», 10.06.1882, 3)։

«Մշակի» կարծիքով Ջ. Գարիբալդին նշանավոր այլ անհատների նման իրենից հետո թողեց կատարած մեծ գործեր, բարի համբավ ու «գեղեցիկ հիշատակներ»։ Թերթն այդ հիշատակներից է համարում նրա մուգ կարմիր վերնաշապիկը, անեզր գլխարկն ու լայնարձակ, առանց թևքերի վերարկուն, որով ցանկանում էր ցույց տալ, որ «մարդու թևերը պետք է ազատ լինեն և ոչ թե թևնոցների մեջ բանտարկվեն»։ Մարդիկ այնքան հարգում են նրա թողած այս «վսեմ ու քաղցր հիշատակները, որ դրանք ամենայն սիրով գործածում են»։

«Մշակի» համոզմամբ Ջ. Գարիբալդու գործը չի մահացել. նա իրենից հետո մեծ հետք է թողել մարդկության համար։ Իտալիայի «երևելի ազգասերի» մատուցած ծառայություններն իր հայրենիքին կենդանի ժամանակ շարունակում են ազդել նաև նրա մահից հետո։ Հանգուցյալ հերոսի քաջագործություններն ու մարդկային բարձր որակները գովաբանելով՝ «ժողովուրդները համակրություն են հայտնում և այն երկրին, որ ծնեց նրան՝ իր բարօրության ու մարդկությունը զարդարելու համար»։ Ըստ թերթի՝ Ջ. Գարիբալդու «հիշատակն ավելին է, քան նշանավոր մարդկանց թողած գործերը, քանի որ այն համամարդկային նշանակություն ունի»։ «Մշակը» Ջ. Գարիբալդուն բնութագրում է ոչ միայն որպես անվանի զորավար, հայրենասեր, երևելի անհատականություն, այլև մեծ մասոն, թեև այդ մասին ուղիղ չի արտահայտվում։ «Միատեսակ զգացմունք հայտնելով երևելի իտալացու նկատմամբ,– գրում է «Մշակը»,– լուսավորյալ աշխարհը ավելի ուժեղ է զգում այն շահերի համերաշխությունը, որոնցով կապված են միմյանց հետ տարբեր երկրներն ու պետությունները, ավելի ուժեղ է զգում խաղաղության պահանջը» («Մշակ», 12.06.1882, 3)։

Վիտտորիո Էմմանուելի ազգային պայքարի գնահատականը։ «Մշակ» թերթն իտալական ազգային միասնական պետության կազմավորման գործում հավուր պատշաճի կարևորում է նաև Սարդինիայի թագավոր Վիտտորիո Էմմանուել II-ի դերը։ Լրագիրը գրում է, որ նա Սարդինիայի թագավոր Կառլ Ալբերտի առաջին զավակն էր ու թագաժառանգը։ Ստանալով զինվորական կրթություն՝ նա իր հոր հետ մասնակցեց 1848-1849 թթ. ազատագրական պատերազմին և «ամենքին զարմացրեց ի անօրինակ քաջությամբ»։

1849 թ. մարտի 23-ին Նովարայում կրած պարտությունից հետո Կառլ Ալբերտը հրաժարվեց գահից, որը Վիտտորիո Էմմանուելը ժառանգեց «շատ անհաջող հանգամանքներում: Նա մի կողմից պետք է պատերազմն ավարտեր, մյուս կողմից՝ երկրի ներսում հեղափոխությունը նվաճեր»: Երիտասարդ թագավորն Ավստրիային մեծ ռազմատուգանք վճարեց և ծանր զոհաբերություններով հաշտության պայմանագիր կնքեց: Չնայած դրան՝ նա իր հայրենակիցներին «խոստացավ սրբությամբ պահել իր հոր շնորհած սահմանադրությունը» և այդ խոստմանը հավատարիմ մնաց մինչև իր կյանքի վերջը: Այդ պատճառով նրա մասին ասում էին՝ «թագավորն ազնիվ մարդ է» («IL re galantuomo») («Մշակ», 14.01.1878, 3):

«Մշակը» ճիշտ է ներկայացնում 1848-1849 թթ. իտալական ազատագրական պայքարին Վիտտորիո Էմմանուելի մասնակցությունը և դրա հետևանքները Սարդինական թագավորության համար (История Италии, 1970բ, 201-208; Революции 1848-1849, 1952բ, 34-35; История XIX века, 1938ե, 67): Թերթը միաժամանակ նշում է, որ պատերազմում կրած պարտությունից հետո Վիտտորիո Էմմանուելը ծածուկ պատրաստվում էր նորից ձեռնամուխ լինելու վճռելու Կարլ Ալբերտի «ավանդած ազգայնության մեծ խնդիրը՝ Իտալիայի ազատությունը օտար տիրապետությունից («Մշակ», 14.01.1878, 3):

«Մշակի» կարծիքով պատերազմից հետո Վիտտորիո Էմմանուելի հարաբերությունները որքան վատանում էին Ավստրիայի հետ, այնքան նա ավելի մեծ եռանդով արևմտյան պետությունների պաշտպանությունն էր փնտրում: 1853 թ. թագավորը Կ. Կավուրի ուղեկցությամբ այցելեց Փարիզի ու Լոնդոնի արքունիքները, որտեղ «սպասվածից ավելի սիրալիր և բարեկամական ընդունելության արժանացավ»: Արևելյան պատերազմի ժամանակ Վիտտորիո Էմմանուելն Անգլիայի ու Ֆրանսիայի հետ Ռուսաստանի դեմ դաշինք կնքեց: Այս պարագայում, ինչպես նշում է «Մշակը», Վիտտորիո Էմմանուելը միշտ «երևելի ազգասեր և երևելի պետական գործիչ կոմս Կավուրի խորհրդով էր վարվում («Մշակ», 14.01.1878, 3): «Մշակն» իրավացիորեն ընդգծում է Սարդինիայի կառավարության ղեկավար, Ռիսորջիմենտոյի երևելի դեմքերից կոմս Կամիլո Կավուրի բացառիկ դերը Իտալիայի միավորման գաղափարն առաջ քաշելու և դրան հասնելու ուղին մատնանշելու գործում:

«Մշակի» գնահատականով Ֆրանսիայի կայսր Նապոլեոն III-ը հանդիսացավ «Սարդինական քաղաքակրթության օրինավոր պաշտպանը»: Իրենց դաշինքն ավելի ամրապնդելու համար Վիտտորիո Էմմանուելն իր մեծ աղջիկ Կլոթիլդային 1859 թ. հունվարի 28-ին ամուսնացրեց Ժոզեֆ Նապոլեոնի հետ, որով Ֆրանսիան ու Սարդինիան կապվեցին նաև ընտանեկան դաշինքով («Մշակ», 14.01.1878, 3):

Թերթն ճիշտ է նկատում, որ 1858 թ. հուլիսին Պլոմբյերում Կամիլո Կավուրի և Նապոլեոն III-ի ձեռք բերած գաղտնի պայմանագրով ու իր աղջկա ամուսնությամբ Վիտտորիո Էմմանուելն ամրապնդեց կապը Նապոլեոն III-ի հետ: Ֆրանսիայի կայսրն իտալացիներին խորհուրդ էր տալիս համախմբվել թագավորի դրոշի տակ և «միավորվել հանուն մեկ նպատակի՝ ձեր երկրի ազատագրման» (Дебидур, 1995բ, 155, 162, 168; История XIX века, 1938գ, 270; История Италии, 1970բ, 219-220):

«Մշակի» խմբագիր Գ. Արծրունու կարծիքով՝ Վիտտորիո Էմմանուել թագավորը դրանով հաշվենկատ քայլ կատարեց: Նա իր առաջ նպատակ էր դրել Սարդինական փոքր պետության «թագավորի դրությունից հասնելու ամբողջ Իտալիայի թագավորի նշանակությանը»: Գ. Արծրունու բնութագրմամբ թագավորը «զգույշ մարդ էր» և ավստրիական միապետության հետ

պատերազմ սկսելով՝ ցանկանում էր «ազգային հեղափոխության ընդարձակվելուն հնարավորություն չտալ» («Մշակ», 29.06.1872, 3)։

«Մշակի» պատմելով՝ Վիտտորիո Էմմանուելի հաշվարկը ճիշտ դուրս եկավ։ Նա հետամուտ լինելով «իր անձնական շահերին ու օգուտներին» և արտաքուստ ցույց տալով, թե մտածում է «ժողովրդական գործի մասին»՝ իրականում «ձգտում էր Իտալիայի միավորմանը»։ Ժողովրդի ճակատագիրը, բարեփոխումներ անելը, երկրի հարստությունը, հարկերի թեթևացումը, լուսավորության տարածումն այնպիսի հարցեր էին, որոնց մասին Վիտտորիո Էմմանուելը մինչ այդ չէր մտածում («Մշակ», 29.06, 1872, 3)։

Ըստ թերթի՝ Իտալիայի միավորմամբ մտահոգված Վիտտորիո Էմմանուել II-ը 1859 թ. Ֆրանսիայի հետ դաշնակցած պատերազմ սկսեց Ավստրիայի դեմ, որի ժամանակ «նորից իր քաջությունը ցույց տվեց ավստրիացիներին» («Մշակ», 14.01.1878, 3)։ Հունիսի 8-ին Վիտտորիո Էմմանուելը Նապոլեոն III-ի հետ «փառահեղությամբ Միլան մտավ»։ Վիլլաֆրանկայի ու Ցյուրիխի հաշտության պայմանագրերի հիման վրա Լոմբարդիան տրվեց նրան։ Տոսկանայի մեծ դքսությունն ու Էմիլիայի գավառները, որոնք պատերազմի ժամանակ իրենց տիրակալներին հեռացրել էին և անցել Սարդինիայի հովանավորության տակ, 1860 թ. գարնանը միացան Սարդինիային։ Ապրիլ-մայիսին Վիտտորիո Էմմանուելը «անձամբ ընդունեց նրանց հպատակության երդումը»։ «Մշակի» կարծիքով այս իշխանությունների «միավորումը դյուրությամբ գլուխ չեկավ»։ Դրա փոխարեն Նապոլեոն III-ը ստացավ Վիտտորիո Էմմանուելի ժառանգական երկու հողերը՝ Սավոյան ու Նիցցայի կոմսության մեծ մասը («Մշակ», 14.01.1878, 3)։ Դրանով, ինչպես եզրակացնում է թերթը, Իտալիան «վարձատրեց իր ոչ անշահասեր դաշնակցին մարդկային կորուստներով ու հայրենիքի հողի մի մասով» («Մշակ», 29.06.1872, 3)։

«Մշակն» իրավացի է. Վիտտորիո Էմմանուելը բավարարվեց Ցյուրիխի հաշտության պայմանագրով ձեռք բերածով և համաձայնեց Ավստրիայի հետ նպաստել Իտալական համադաշնության ստեղծմանը՝ Հռոմի պապի հովանու ներքո։ Պայմանագրից դժգոհ մնացած Կ. Կավուրը որպես բողոքի նշան հրաժարվեց կառավարության ղեկավարի պաշտոնից (История Италии. 1970բ, 223; История XIX века. 1938գ, 275-276; Гарибальди, 1966, 241-242, 245; Дебидур, 1995բ, 173-176; Галло,1998, 213-224)։

Նապոլեոն III-ի և Վիտտորիո Էմմանուելի պայմանավորվածությունները «Մշակը» համարում է քաղաքական հաշվենկատ ու փոխշահավետ գործարք։ Թերթի կարծիքով Վիտտորիո Էմմանուելն այդպես վարվում էր նաև իտալական փոքր պետությունների նկատմամբ։ Նա «երբեք վճռական քայլ չէր անում» և թույլ էր տալիս «ժողովրդական հերոս Ջ. Գարիբալդուն սկսել ամեն գործ»։ Եթե Ջ. Գարիբալդուն հաջողվում էր գրավել որևէ պետություն, ապա Վիտտորիո Էմմանուելը «իսկույն նրա նվաճած տերությունն ի ձեռքն էր գցում և միացնում իր թագավորության հետ»։ Իսկ եթե Ջ. Գարիբալդին անհաջողություն էր կրում, այն ժամանակ թագավորը ցույց էր տալիս, որ նրան չի համակրում, համարում էր ապստամբող, ձեռբակալում էր և աքսորում Կապրերա կղզի։ Մյուս կողմից «Մշակի» դիտարկմամբ, երբ հարկավոր էր նոր պայքար նախաձեռնել, Ջ. Գարիբալդուն միշտ հաջողվում էր առանց արգելքի փախչել բանտարկությունից, զորք կազմել ու նորից կռիվ սկսել։ «Միամիտ իտալացիները,– գրում է «Մշակը»,– կարծում էին, որ տերությունը այդ կատակերգությունը խաղալով հոգում է իրենց մասին» («Մշակ», 29.06.1872, 3)։

«Մշակի» կարծիքով Վիտտորիո Էմմանուելն այդ ճանապարհով Սարդինիային միացրեց նաև Նեապոլի թագավորությունը։ Թերթի պատմելով՝ 1860 թ., երբ Ջ. Գարիբալդին ազատագրեց

նախ Սիցիլիան, այնուհետև՝ Նեապոլը, Վիտտորիո Էմմանուելը, անձամբ գլխավորելով զորքը, սեպտեմբերին անցավ Նեապոլի թագավորության սահմանը: Նոյեմբերի 7-ին նա մտավ Նեապոլ, որտեղ Ջ. Գարիբալդին իր իշխանությունը հանձնեց նրան: Այսպիսով՝ եզրակացնում է թերթը, մինչև 1860 թ. վերջը ներքին Իտալիան ամբողջությամբ միացավ Սարդինական թագավորությանը: 1861 թ. մարտի 17-ին Վիտտորիո Էմմանուելը ընդունեց «Իտալիայի թագավոր տիտղոսը» («Մշակ», 14.01.1878, 3):

Հավաստի ներկայացնելով վերը նշված իրադարձությունները (История Италии, 1970բ, 228-237; История XIX века, 1938գ, 280-285; Дебидур, 1995բ, 200; Канделоро, 1971, 157-158)՝ «Մշակը» նշում է, որ 1861 թ. հունիսին՝ Կ. Կավուրի հանկարծամահ լինելու «օրից սկսած, իտալական քաղաքականությունը չկարողացավ առաջվա պես հաստատ և աներկյուղ քայլերով առաջ խաղալ» դեպի Իտալիայի միավորում: Դրան հասնելու համար «արտաքին քաղաքականությունում ֆրանս-իտալական դաշնագրության ջերմ պաշտպան» Վիտտորիո Էմմանուելը Ֆրանսիայի հետ նոր դաշինք կնքեց («Մշակ», 14.01.1878, 14 հունվարի, 3):

1862 թ. Ջ. Գարիբալդին նորից պայքար սկսեց Հռոմը նվաճելու համար: Վերջինիս ուշադրությամբ հետևող Վիտտորիո Էմմանուելը, ըստ «Մշակի», «գաղտնի ուրախությամբ սպասում էր նրա հաջողությանը»: Բայց «Հռոմի պապի պաշտպան» Նապոլեոն III-ը բողոքեց այդ պայքարի դեմ, և թագավորը, «վախենալով ժողովրդական լայն շարժումից», Ջ. Գարիբալդու դեմ զորք ուղարկեց: Ասպրոմոնտեում վիրավորված Ջ. Գարիբալդուն թագավորի հրամանով նախ բանտարկեցին Վարինյանոյի բերդում, այնուհետև տեղափոխեցին Սպեցիա («Մշակ», 29.06.1872, 3):

Թերթի դիտարկմամբ ներքին կյանքում Վիտտորիո Էմմանուելը իրեն հեռու էր պահում խորհրդարանի գործերին ու կուսակցությունների բանավեճերին միջամտելուց: Արտաքին քաղաքականությունում նա ֆրանս-իտալական դաշնագրության պաշտպան էր ու «անհաջող մի քանի փորձեր արեց Հռոմի պապի հետ հաշտվելու համար»: 1864 թ. սեպտեմբերին Ֆրանսիայի հետ կնքած պայմանագրի համաձայն՝ Վիտտորիո Էմմանուելը 1865 թ. գարնանը մայրաքաղաքը Թուրինից տեղափոխեց Ֆլորենցիա, որը Իտալիայի մայրաքաղաք հռչակվեց («Մշակ», 14.01.1878, 3):

Ըստ «Մշակի»՝ Վիտտորիո Էմմանուելը՝ որպես Պրուսիայի դաշնակից, 1866 թ. մասնակցեց ավստրո-պրուսական պատերազմին: Ավստրիան ցանկություն հայտնեց անջատ հաշտություն կնքել Իտալիայի հետ և զիջել Վենետիկի գավառը, բայց Վիտտորիո Էմմանուելը «չցանկացավ դավաճանել իր դաշնակցին և շարունակեց պատերազմը» («Մշակ», 14.01.1878, 3): Ընդգծելով Վիտտորիո Էմմանուելի հուսալի դաշնակից լինելը՝ «Մշակը» գրում է, որ չնայած Իտալիան այդ պատերազմում պարտություն կրեց, այնուամենայնիվ թագավորը հասավ իր նպատակին: 1866 թ. հոկտեմբերի 3-ին Վիեննայում կնքված հաշտության պայմանագրով ամբողջ Լոմբարդո-Վենետիկյան նահանգն անցավ Իտալիային՝ «Լոմբարդական երկաթե թագի հետ միասին» («Մշակ», 14.01.1878, 3):

Հավաստի ներկայացնելով անկախության համար երրորդ պատերազմի արդյունքը և Վենետիկի միավորումը Իտալական թագավորությանը (История Италии, 1970բ, 249; История XIX века, 1938գ, 292-294; Дебидур, 1995բ, 277)՝ «Մշակը» գրում է, որ այդ հաջողությունից հետո՝ 1866 թ. դեկտեմբերին, ֆրանսիական զորքերը դուրս եկան Պապական պետությունից, որից օգտվելով՝ Ջ. Գարիբալդին կրկին փորձեց գրավել Հռոմը: Վիտտորիո Էմմանուել II-ը սկզբում «այդ շարժմանը կատարյալ ազատություն էր տվել», բայց 1867 թ. նոյեմբերին՝ Ջ. Գարիբալդու

պարտությունից հետո, նա որևէ քայլ չձեռնարկեց ֆրանսիացիների առաջն առնելու համար։ Դա ընդհանուր դժգոհություն առաջացրեց. Թուրինում ու Ֆլորենցիայում թագավորի դեմ բողոքի ցույցեր տեղի ունեցան։ «Մշակի» կարծիքով 1868 թ. թագաժառանգ Ումբերտոյի ամուսնության առթիվ հասարակության համակրությունը նորից թագավորի կողմն անցավ։

Թերթի հավաստի պատմելով՝ 1870 թ. օգոստոսի 2-ին Ֆրանսիան տեղեկացրեց Վիտտորիո Էմմանուելին իր զորքերը Հռոմից հետ կանչելու ու Իտալիայի հետ նորից սեպտեմբերյան դաշնագրությանը վերադառնալու մասին։ Սեդանի մոտ Ֆրանսիայի կրած պարտությունից հետո Իտալիայի խորհրդարանի ձախակողմյան պատգամավորները Վիտտորիո Էմմանուելին պահանջ ներկայացրին Հռոմը գրավելու մասին։ Թագավորը «սկզբում փոքր-ինչ տատանվում էր», բայց ֆրանսիական կայսրության անկումից հետո «Հռոմին տիրելու վերջին արգելքն վերացավ»։ Պիուս IX-ի հետ սկսված բանակցությունները արդյունք չտվեցին, Վիտտորիո Էմմանուելի հրամանով իտալական զորքերը մտան Պապական պետություն և սեպտեմբերի 20-ին գրավեցին Հռոմը։ Անցկացված ժողովրդական հանրաքվեն 133 հազար 681 կողմ, 1507 դեմ ձայներով որոշեց պապական երկիրը և Հռոմը միավորել Իտալական թագավորության հետ («Մշակ», 14.01.1878, 4)։

Միանգամայն հավաստի ներկայացնելով Հռոմի ազատագրումը (История Италии, 1970բ, 250-251; История XIX века, 1938գ, 303-304; Канделоро, 1971, 417-419), «Մշակը» եզրակացնում է. «Ահա այսպես ավարտվեց տարիներ առաջ սկսված իտալական շարժումը, որով Իտալիայի միավորման խնդիրը լուծվեց և Հռոմը դարձավ Իտալիայի մայրաքաղաքը»։ 1870թ. դեկտեմբերի 31-ին Վիտտորիո Էմմանուել II-ը մտավ Հռոմ, որին ժողովուրդն ընդունեց «ամենամեծ ոգևորությամբ»։ 1871 թ. նոյեմբերի 27-ին Հռոմում Իտալիայի խորհրդարանում Վիտտորիո Էմմանուել թագավորն իր գահական ճառում հայտարարեց. «Ավարտեցի գործը, որին նվիրել էի իմ ամբողջ կյանքը» (Մշակ, 14.01.1878, 4)։

«Մշակը» միավորված Իտալիայի թագավոր Վիտտորիո Էմմանուելին համարում է լուրջ քաղաքական գործիչ, որը մտածում է իր պետության ու ժողովրդի շահերի մասին։ Թերթն իր գնահատականը հիմնավորում է՝ նկատի ունենալով 1873 թ. սեպտեմբերին Վիտտորիո Էմմանուելի կատարած այցերը Վիեննա ու Բեռլին, որոնք «քաղաքական մեծ նշանակություն ունեին»։ Թագավորը գնաց այդ քայլին՝ «անտեսելով բոլոր նախապաշարումները, գուցե նաև անձնական հակակրանքն Ավստրիայի նկատմամբ, որը երկար ժամանակ ճնշում էր Իտալիային և արգելում էր նրա զարգացմանը»։ Դրանով թագավորը ցույց տվեց իր ժողովրդին, որ «հասկանում է երկրի օգուտները»։ Նա այդ «ուղևորությամբ գրավեց ժողովրդի համակրությունը, որն աննկարագրելի ոգևորությամբ» նրան ճանապարհեց դեպի Վիեննա և Բեռլին («Մշակ», 04.10.1873, 3)։

Ըստ «Մշակի»՝ դառնալով Իտալիայի թագավոր՝ Վիտտորիո Էմմանուելի ֆինանսական վիճակն ամենևին չբարելավվեց, այլ ավելի վատացավ։ Պալատական ու կյանքի ծախսերը կրկնապատկվեցին, թագավորի պարտքերն անդադար աճում էին։ Հայտնվելով նյութական ծանր վիճակում՝ Վիտտորիո Էմմանուել II-ը նոր պարտքեր էր վերցնում («Մշակ», 01.04.1876, 3)։

«Մշակն» անդրադառնում է Վիտտորիո Էմմանուելի մահվանը, որն «ամենքին զարմանք ու տխրություն պատճառեց»։ Թերթը պատմում է նրա հիվանդության, մահվան պատճառի, կյանքի վերջին օրվա, մեծ պատիվներով անցկացված վերջին հրաժեշտի և Հռոմի պանթեոնում հանդիսավորությամբ հուղարկավորելու մասին («Մշակ», 14.01.1878, 4)։ «Մշակի» դիտարկմամբ Վիտտորիո Էմմանուելի մահն ազդարարող բոլոր լրագրերը «ցավով և գովեստով են գրում նրա

մասին»: Այդ թերթերն ընդգծում են «թագավորի հայրենասիրությունը, քաջությունը ազնվասրտությունը և իր ազգին մատուցած մեծ ծառայությունները» («Մշակ», 20.01.1878, 3):

«Մշակի» կարծիքով Վիտտորիո Էմմանուել թագավորը երեք նշանավոր գործ է արել. միավորել է Իտալիան, Վենետիկը միացրել է Իտալիային և Հռոմը դարձրել է համայն Իտալիայի մայրաքաղաքը: Ըստ թերթի՝ Վիտտորիո Էմմանուելն «իր հաջողությունների մեծ մասի համար պարտական է կոմս Կավուրին, Ֆրանսիայի օգնությանը և այն բարենպաստ պայմաններին, որոնցից կարողացավ օգուտ քաղել»:

Սավոյայի դուքսը «Իտալիայի բոլոր կառավարիչներին, այդ թվում՝ Հռոմի պապին, իրենց գահերից վայր գցեց և իր գլխին դրեց Իտալիայի թագը»: «Մշակի» բնութագրմամբ Վիտտորիո Էմմանուել II-ի «անունը մի փառավոր տեղ է բռնում Իտալիայի և ժամանակակից պատմության ամենից գեղեցիկ էջերի մեջ» («Մշակ», 20.01. 1878, 3):

Եզրակացություն: Հայ լիբերալ հոսանքի ձայնափող «Մշակ» թերթը բավական հավաստի տեղեկություններով ներկայացնում է իտալական Ռիսորջիմենտոյի առաջնորդներից Ջուզեպպե Մացցինիի, Ջուզեպպե Գարիբալդու, Վիտտորիո Էմմանուել II թագավորի գործունեությունն ու դերը Իտալիայի միավորման գործում: Թերթը սկզբունքային, անաչառ ու անկողմնակալ դիրքերից բնութագրում է նրանցից յուրաքանչյուրին: «Մշակի» կարծիքով Ջ. Մացցինին տարիների համառ, անմնացորդ պայքարի արդյունքում անձնապես չհասավ իր կյանքի գլխավոր նպատակին՝ հայրենիքի բաղձալի ազատությանն ու անկախությանը: Բայց դա ամենևին չի նսեմացնում նրա քաղաքական դերը հայրենիքի անկախության գործում: Ջ. Մացցինին իր անձնուրաց պայքարով իտալացիների շրջանում արթնացրեց հայրենասիրական զգացմունք և երիտասարդությանը մղեց դեպի զոհաբերություն՝ հանուն հայրենիքի:

«Մշակի» գնահատմամբ Ջուզեպպե Գարիբալդին իսկական ժողովրդական հերոս է, ազատության անօրինակ մարտիկ, մեծ հայրենասեր, ազգասեր, երևելի մարդ ու անհատականություն: Հայրենիքի ազատության ու անկախության համար նահատակության պատրաստ զորավարը, արհամարհելով բոլոր վտանգները, սպառնալիքները, բանտարկությունն ու զրկանքները, իր պայքարով աշխարհին ցույց տվեց աննախադեպ հայրենասիրության և հերոսության փայլուն օրինակ: Նման անհատների համար են արձանը, երգը, փառքը, պատիվն ու անմահ անունը:

«Մշակի» դիտարկմամբ Վիտտորիո Էմմանուել Երկրորդը, ապավինելով Կ. Կավուրի դիվանագիտական ճկուն քաղաքականությանը, Ջ. Գարիբալդու ազատագրական պայքարին, Ֆրանսիայի աջակցությանը, եվրոպական միջազգային բարենպաստ պայմաններին, երեք նշանավոր գործ կատարեց: Նա ազատագրեց Լոմբարդիան, Վենետիկը միացրեց Իտալիային ու Հռոմը դարձրեց Իտալիայի մայրաքաղաքը: Այդ իմաստով նա իրավամբ պատվավավոր տեղ է գրավում ժամանակակից Իտալիայի պատմության մեջ:

Գրականության ցանկ

«Մշակ», 1873, 23 օգոստոսի, № 32 էջ 3:

«Մշակ», 1874, 13 հունիսի, № 23, էջ 4, 7 նոյեմբերի, № 44, էջ 3:

«Մշակ», 1875, 30 հունվարի, № 4, էջ 3, 20 փետրվարի, № 7, էջ 3, 27 մարտի, № 12, էջ 4, 26 հուլիսի, № 25, էջ 3:

«Մշակ», 1876, 1 ապրիլի, № 12, էջ 3:

«Մշակ», 1878, 14 հունվարի, № 1, էջ 3, 20 հունվարի (1 փետրվարի), № 5, էջ 3, 28 սեպտեմբերի, № 165, էջ 1:

«Մշակ», 1882, 5 հունիսի, № 99, էջ 3-4, 8 հունիսի, № 100, էջ 2-3, 9 հունիսի, № 101, էջ 2-3, 10 հունիսի, № 102, էջ 3, 12 հունիսի, № 104, էջ 1, 23 հունիսի, № 111, էջ 3:

«Մշակ», Թիֆլիս, 1872, 16 մարտի, № 11, էջ 3, 29 հունիսի, № 25, էջ 2, 23 մարտի, № 12, էջ 3:

Chisalberti A. (1967), Ancora sulla lettera di Mazzini a Pio IX. Scritti in memoria di A. Giuffre. Milano,

G. Secerdote da vita di Giuseppe Garibaldi (1933), Milano, 796 p.

Garibaldi G. (1934). v. I. Scritti editi e discorsi politici e militari. Ed. Nazionale, Bologna, 230 p.

King B. (1960), Storia dell'unita d'Italia, v. 1, Roma, 418 p.

Scritti editi e inedita di Giuseppe Mazzini (1923), v. XXXVI, Imola, P. Galeati, 418 p.

Victor Hugo. Contre I'invalidation de Garibaldi Discour a I'Assamblee nationale, 8 mars, 1871.

William R. Denslow (2004), Harry S. Truman: 10.000 Famous Freemasons from K to Z,. Kessiger Publishing. 796 p.

Галло М. (1998), Джузеппе Гарибальди. Ростов- на -Дону, Феникс. 480 стр .

Гарибальди Дж. (1966). Мемуары. Пер. В. С. Бондарчука и Ю. А. Фридмана; статья и комментарии В. Е. Невлера, М.: Наука. 484 стр .

Гоголицин Ю. (2010). Тайные общества в истории человечества или кто правит миром. Ростов-на-Дону, Феникс. 487 стр .

Дебидур А. (1995), Дипломатичская история Европы. 1814-1878, т. 2, Ростов-на-Дону, Государственное издательство иностранной литературы. 487 стр .

История XIX века **(1938),** т. 3. Под. ред. Лависса и Рамбо. Москва: Государственное социально-экономическое издание. 651 стр .

История Италии **(1970),** т. 2 Под. ред. К.Ф.Мизиано. Москва: Наука. 608 стр.

История Парижской Коммуны 1871 года**, (1971),** Москва: Наука. 300 стр.

Канделоро Дж. (1971), История современной Италии. т. 5. Москва: Изд-во Иностранная литература. 300 стр.

Канделоро К. (1956), Католическое движение в Италии. Москва. Изд-во Иностранная литература. 585 стр.

Карпачев С. (2008), Масоны. Словарь. Москва: Изд АСТ. 604 стр.

Кирова К. (1981), Жизнь Джузеппе Мадзини. Москва: Наука. 190 стр.

Морамарко М. (1990). Масонство в прошлом и настоящем. Москва: Прогресс. 289 стр.

Невлер (Вилин) В. (1959), Джузеппе Гарибальди. М., Наука, 45 стр.

Революции 1848-1849 **(1952),** т. 2, Москва: Знание. 239 стр.

Ридли Дж. (2007), Фримасоны. Москва: Эксм. 381 стр.

Шури М. (1970), Коммуна в сердце Парижа, Москва: Прогресс. 493 стр.

References

«Mshak», 1872, 16 marti, № 11, ēj 3, 29 hunisi, № 25, ēj 2, 23 marti, № 12, ēj 3: **(in Armenian)**

«Mshak», 1873, 23 ōgostosi, № 32 ēj 3: **(in Armenian)**

«Mshak», 1874, 13 hunisi, № 23, ēj 4, 7 noyemberi, № 44, ēj 3: **(in Armenian)**

«Mshak», 1875, 30 hunvari, № 4, ēj 3, 20 pʻetrvari, № 7, ēj 3, 27 marti, № 12, ēj 4, 26 hulisi, № 25, ēj 3: **(in Armenian)**

«Mshak», 1876, 1 aprili, № 12, ēj 3: **(in Armenian)**

«Mshak», 1878, 14 hunvari, № 1, ēj 3, 20 hunvari (1 pʻetrvari), № 5, ēj 3, 28 septemberi, № 165, ēj 1: **(in Armenian)**

«Mshak», 1882, 5 hunisi, № 99, ēj 3-4, 8 hunisi, № 100, ēj 2-3, 9 hunisi, № 101, ēj 2-3, 10 hunisi, № 102, ēj 3, 12 hunisi, № 104, ēj 1, 23 hunisi, № 111, ēj 3: **(in Armenian)**

Chisalberti A. (1967), Ancora sulla lettera di Mazzini a Pio IX. Scritti in memoria di A. Giuffre. Milano.

Djebidup A. (1995), Diplomatichskaja istopija JEvpopy. 1814-1878, t. 2, Postov-na-Donu, Gosudapstvjennoje izdatjel'stvo inostpannoj litjepatupy. 487 stp . **(in Russian)**

G. Secerdote da vita di Giuseppe Garibaldi (1933), Milano, 796 p.

Gallo M. (1998), Dzhuzjeppje Gapibal'di. Postov- na -Donu, Fjeniks. 480 stp . **(in Russian)**

Garibaldi G. (1934), v. I. Scritti editi e discorsi politici e militari. Ed. Nazionale, Bologna, 230 p. **(in Russian)**

Gapibal'di Dzh. (1966), Mjemuapy. Pjep. V. S. Bondapchuka i JU. A. Fpidmana; stat'ja i kommjentapii V. JE. Njevljepa, M.: Nauka. 484 stp . **(in Russian)**

Gogolicin Ju (2010), Tajnyje obsh'jestva v istopii chjelovjechjestva ili kto ppavit mipom. Postov-na-Donu, Fjeniks. 487 stp . **(in Russian)**

Istopija Italii. **(1970)** t. 2 Pod. pjed. K.F.Miziano. Moskva: Nauka. 608 stp. **(in Russian)**

Istopija Papizhskoj Kommuny 1871 goda **(1971)**. Moskva: Nauka. 300 stp.**(in Russian)**

Istopija XIX vjeka. **(1938),** t. 3. Pod. pjed. Lavissa i Pambo. Moskva: Gosudapstvjennoje social'no-ekonomichjeskoje izdanije. 651 stp . **(in Russian)**

Kandjelopo Dzh (1971), Istopija sovpjemjennoj Italii. t. 5. Moskva: Izd-vo Inostpannaja litjepatupa. 300 stp. **(in Russian)**

Kandjelopo K. (1956), Katolichjeskoje dvizhjenije v Italii. Moskva. Izd-vo Inostpannaja litjepatupa. 585 stp. **(in Russian)**

Kappachjev S. (2008), Masony. Slovap'. Moskva: Izd AST. 604 stp. **(in Russian)**

King B. (1960), Storia dell'unita d'Italia, v. 1, Roma, 418 p.

Kipova K. (1981), Zhizn' Dzhuzjeppje Madzini. Moskva: Nauka. 190 stp. **(in Russian)**

Mopamapko M. (1990), Masonstvo v pposhlom i nastojash'jem. Moskva: Ppogpjess. 289 stp.**(in Russian)**

Njevljep (Vilin) V. (1959), Dzhuzjeppje Gapibal'di. M., Nauka. 45 stp. **(in Russian)**

Scritti editi e inedita di Giuseppe Mazzini, (1923), v. XXXVI, Imola, P. Galeati, 418 p.

Shupi M. (1970), Kommuna v sjepdcje Papizha, Moskva: Ppogpjess. 493 stp. **(in Russian)**

Victor Hugo. Contre I'invalidation de Garibaldi Discour a I'Assamblee nationale, 8 mars, 1871.

William R. Denslow, Harry S. Truman (2004), 10.000 Famous Freemasons from K to Z,. Kessiger Publishing. 796 p.

Pidli Dzh. (2007), Fpimasony. Moskva: Eksm. 381 stp. **(in Russian)**

Pjevoljucii 1848-1849 (**1952),** t. 2, Moskva: Znanije. 239 stp. **(in Russian)**